

Մ Ա Ն Ր Լ ՈՒՐ ԵՐ

— Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկերութիւնը որոշել է բանալ Քիֆլիսում մի կենդանական հայկական գրադարան-ընթերցարան և այդ առթիւ բնարուած է մի մասնաժողով նախագահութեամբ Լէօն և քարտուղարութեամբ Լ. Բաբայեանի: Մասնաժողովը որոշել է ամենից առաջ աշխատել ձեռք բերել հայերէն լոյս տեսած բոլոր գրքերը և կովկասագիտութեան ու հայագիտութեան վերաբերեալ ամեն լեզուներով հրատարակուած բոլոր գրուածքները: Ապագայ այդ հսկայական և կարևոր գաղարարանի իրը հիմք պէտք է ծառայէ Բարեգործական Ընկերութեան գրադարանը:

— Քիֆլիսում հրատարակուած է մի նոր հայերէն պատկերազարդ շաբաթաթերթ «Գրականութիւն և Կեանք» անունով Գր. Բալասեանի խմբագրութեամբ:

— Յայտնի վաճառական Բազրատ Գէորգեանը համաձայնութիւն է յայտնել Բաքուի Հայոց Կուլտուրական Միութեան յատկացնել 10,000 ռուբլի, որպէս զի Միութիւնը բանայ մի տարրական դպրոց Ագուլիսին կից Քաղաքիկ գիւղում:

— Կառավարութեան կարգադրութեամբ Քիֆլիսում արգելուած է ժողովրդական համալսարանում հայերէն դասախոսութիւններ անելը: Փակուած են նաև Յովնանեան դպրոցին կից գանուող հայկական հանրակրթական Էուրսերը:

— Բաքուում բժիշկ Զախարէզեանը իւր բոլոր կարողութիւնը, մօտ 40 հազար ռուբլի կտակել է Բաքուի Հայ. Կուլտուր. Միութեան՝ գիւղական դպրոց ու գրադարան հիմնելու նպատակով:

— Մայիսի 5-ին Քիֆլիսում ինքնառականութեամբ վերջ դրեց իւր կեանքին և 9-ին խուռն բաղմութեամբ ու պատկնեքով թաղուեցաւ Խոջիվանքի գերեզմանատանը հայ երիտասարդ գրագէտներից մէկը—Գրիգոր Վանցեանը:— Ներսիսեան դպրոցն աւարտելով հանգուցեալը ուսել էր Գերմանիայում 4 տարի և վերադառնալով Քիֆլիս անձնատուր եղել մանկավարժական ասպարէզին, ստանձնելով հայերէնի դասեր Քիֆլիսի Առևտրական դպրոցում: Նա յայտնի էր և պարբերական մամուլի մէջ

իւր գլխավորապէս հայերէնի վերաբերեալ լուրջ յօդուածներով ու հայկական կեանքի ուսումնասիրութիւններով, որոնց գլուխ գործոցն է նորա «Հայ բօջանեը» աշխատութիւնը:

Հանդուցեալը կազմել է նաև մի շարք դասագրքեր մեր դպրոցների համար, որպէս՝ «Հայ հեղինակներ», «Համառօտ հայոց պատմութիւն», «Վատմական քերականութիւն», «Դպրոցական քերականութիւն», «Գրպանի ուղղագրութիւն» ևայլն:

Հանդուցեալի եղբրական մահը ամէնքին ցաւ է պատճառել. նա թողել է մի նամակ, որով խնդրում է իւր մահուն համար ոչ որևէ չմեղադրել:

— Արատահամանի հայ թերթերը հաղորդում են, որ Մոսկուայի դրամատէր Յովհաննէս Ժամհարեանը 30,000 Քրանկ է նուիրաբերել Երուսաղէմի Ս. Յակովբեանց Ժառանգաւորաց դպրոցին, որպէս զի այդ գումարով նոյն դպրոցում յատկապէս կրօնական գիտութեանց նուիրուած երկու բարձրագոյն դասընթացքներ բացուին:

— Թիֆլիսեցի Ե. Զոհրաբեանը Ախալցխա քաղաքին 800 ռուբլի է նուիրել, որ իւր անունով մի հիւանդանոց հիմնուի:

— Մայիսի 13-ին ձեմարանական ընտանիքում մի դժբախտութիւն ևս պատահեց. մեռաւ թոքերի արիւնհոսութեամբ Ա. լսարանի սան տաճկահայտակ 22 տարեկան երիտասարդ Արշակ Արբահամեանը: Հանդուցեալի ծնողները Էջմիածին էին եկել 1896 թուի գաղթին և հայր ու որդի տեղաւորուել ձեմարանում, որդին իբրև ձեմարանի սան, հայրը իբրև նոյն հաստատութեան ծառայ: Վաղամեռիկ Արբահամեանը ջանասէր աշակերտներէց էր. հանդուցեալին թաղեցին Գայիանէի գերեզմանատանը. դագաղի վրայ վշտահար ընկերները դրել էին թարմ պսակներ:

— Նորերս Ֆրանսիայում մեռաւ զիտութեանց ձեմարանի անգամ Ֆրանսուա Կոպպէն, ամենքին յայտնի գրականագէտներէց մէկը, որի երկերը թարգմանուած են շատ լեզուներով, ինչպէս նաև մի երկուսը հայերէն:

— Շուշեցի հանգ. Հայրապետ Ղալամեանը կտակով յատկացրել է 4000 ռուբլի բարեգործական նպատակի:

— Եգիպտոսի Հայոց բարեգործ. միութիւնը 380 եգիպտական ոսկի է ուղարկել Հայաստանի կարօտեալներին:

— Անխոնջ հնաբան պրօֆ. Մառը յունիսի սկիզբներին

վերսկսելու է Անիում և շրջակայքում իւր պեղումները: Յարգելի հնախոյոք մտադիր է Անիում հիմնել յատուկ թանգարան, ուր ժողովել կարելի լինի պեղումների բոլոր արդիւնները. ինչպէս նաև պատրաստել տալ հռչակաւոր մայրաքաղաքի յատակագիծը և առհասարակ Անիի աւերակների պահպանութեան խնդիրն ու կառուցուելի թանգարանի հարցը լուրջ հողի վրայ դնել: Անիից դուրս պեղումներ կատարելու է պ. Մառը գլխավորապէս՝ Երերոյքի տաճարում ու Զաքարիա սպասաւարի տոհմի կառուցած ապարանքներում:

— Թիֆլիսում եռանդուն կերպով շարունակում են հետաքրքրուել կաթողիկոսական խնդիրներով և այդ առթիւ արդէն ընտրուած պատուիրակները, գաւառից եկած ներկայացուցիչների հետ միասին խորհրդակցական ժողովներ են գումարում:

— Մայիսի 22-ին Թիֆլիսում — Արախտիքական թատրոնում շքեղօրէն տօնուել է Գրական դսրծիչ Լէօ-ի 25 ամեայ յօբելէանը: Մուտքը թատրոնի դահլիճ եղել է ձրի տոմսակերով:

Յորելեարին ընմ են առաջնորդել երկու հայ վետերաններ — Գ. Սունդուկեան և Ղ. Աղայեան, որոնք և առաջին շնորհաւորական խօսքերն են արտասանել: Ապա հետզհետէ շնորհաւորել են ներբողական խօսքերով բոլոր պատգամաւորները, որոնց թիւը եղել է մի քանի տասնեակ: Նորին ամենապատուութիւն Տեղակալ Սրբազանի օրհնութեան թուղթը կարդացել է բժշկապետ Բ. Նաւասարդեանը, իսկ Էջմիածնի ձեմարանի կողմից շնորհաւորել պ. Ա. Ահարոնեանը:

Յորելեանի առթիւ ստացուած բազմաթիւ հեռադրերից կարդացուել են մի մասը, որոնց մէջ և Էջմիածնի ձեմարանի: Յորելեանը ստացել է և թանկագին նուէրներ:

Յորելեարի շնորհաւորական ջերմ խօսքերով հանգէսը փակուելուց յետոյ, նորա բազմաթիւ յարգողները ճաշ են սարքել «Փանտաղիա» այգում:

— Կովկասի փոխարքայի ամուսին կոմսուհի Գաշկովա-ն մօտ օրերս այցելելով Թիֆլիսում «Մեղու» ընկերութեան արհեստանոցը, նուիրել է 100 ռուբլի: Ընկերութեան ընդհ. ժողովը մրաձայն ընտրել է կոմսուհուն ընկերութեան պատուաւոր անդամ: —

— Պետերբուրգում տիկ. Զաքէլ Բերբերեանն ու պ. Եղիշե Բաղդասարեանը հրատարակել են «Արցունքներ» անունով մի

գրական-երաժշտական, գեղարուեստական ժողովածու, որի արդիւնքը յատկացրուած է հայ սովեալներին: Ժողովածուն պատկերազարտ է և կազմուած է հայ կին գրողներէց թէ ինքնուրոյն և թէ թարգմանական:—

—Յայանի հայ բարեգործ Ա. Մանթաշեանը յարգուով Թիֆլիսի առաջնորդ Գարեգին արքայանի միջնորդութիւնը, յատկացրել է Ներսիսեան դպրանոցի նոր շինութեան համար 150—200 հազար ռուբլի: Թիֆլիզի առաջնորդարանում վերջերս կայացած մի բաղամարդ ժողովում որոշուել է շինութեան մահարդալի համար 2500 ռուբ. մրցանակ նշանակել և այդ առթիւ ծրագիր մշակելու համար ընտուել է մի մասնաժողով ճարտարապետներէց, մանկավարժներէց և մի բժշկից: Նիւնութիւն կառուցուելու է տիկ. Նազիրեանի Ներսիսեան Դպրանոցին նուերարեբաժ և Ստօկնազի մօտ ընկած հողի վրայ:—



Ա Յ Լ Ե ի Ա Յ Լ Ք

Սուրբ Գրքի նորագիտ հին ձեռագրեր.—Անցեալ տարի Գատան Մինինը և ամերիկացի գիտնական Չարլզ Քրիքը Գիզէէ եգիպտացի առևտրականների մօտ եղած հնոտիւնների մէջ գտել են Աստուածաշնչի հին ձեռագրեր, որոնք դուրս են եկած եղել Վերին եգիպտոսի հին Ահմիժ քաղաքի պեղումների ժամանակ: Այժմ Մինինը Journal des Debats թերթում այս չափազանց կարևոր գիտի մասին մի քանի տեղեկութիւններ է տալիս: Ամերիկացի գիտնականների կարծիքով այդ ձեռագրերը պիտի վերագրել Քրիստոսի Դ. Ե. և Զ. դարերին: Նրանց մէջ կան Մովսիսի հինգերորդ գրքը, Յեսու Նաւիայի գիրքը, Սաղմոսը և համարեա ամբողջ Նոր Կտակարանը: Նրանց մէջ կան շատ նոր վարիանտներ և արժէքաւոր լրացումներ այն ձեռագրերի համար, որոնք պահոււմ են Բրիտանական թանգարանում և Վատիկանում, և Մինինի կարծիքով պիտի յարուցանեն Սուրբ Գրքի հին բնագրի նոր ստուգում *:

*) Նորերս հրատարակուել է Ն. Կտակարանի՝ յատկապէս աւետարանների՝ ուսումնասիրութեան համար արժէք ունեցող մի հատուած՝